

Մ. ԳԻՂՈՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ — — ԲԵՐՔԱՅԱՎԱՔԸ

ՀԱՅԿԵՐԱՆ
ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆ
ՍՍՏՐ
ՀՀԽՍՀՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԵԿԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵԿ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյեվ.—Սոցիալիստական շինարարության նոր ետապը 6 4.
2. Կուրբեյկո.—Կուլակը կոլտոզի թշնամի 5 3
3. Գյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն 2 3
4. Սալիկ.—Պաասախան ընկեր կոլտոզնիկներին 5 3
5. Մ. Գիգոյան.—Կոլտոզները մասին 6 3
6. Վ. Իվանով.—Նոր ետապում 5 3
7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրություն 2 3
8. Կոմի աշխատանքը կոլտոզում 8 3
9. Ա. Անդրեյեվ.—Հյուս. Կովկ. գյուղատնտեսության սոցվերակա-
ուուցման խնդիրները 2 3
10. Կալցին.—Խնչպես կազմակերպել և վարել կախատնտեսու-
թյունը կոլտոզներում 8 3
11. Ա. Անդր.—Սոցիալիստական շինարարության գոտում 8 3
12. Հյուս. Կով. Սերբի. ծխախոտագործական միության դիմումը 2 3
13. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի զեկուցումը) 15 3
14. Ա. Հովհաննիսյան. յերգ մարտական փորձի (քանաստեղծու-
թյուններ) 20 3
16. Հյուս. Կով. յերկրային 6 կուսկոնֆերենցիայի բանաձևերը 8 3
16. Զարգացրեք կենդանարուծությունը կոլտոզներում 3 3
17. Յեզիպապետյանի կուլտուրան Հ. Կ. 6 3
18. Միկուլյա.—Դեպի նոր կենցաղը կոլտոզներում 5 3
19. Սկոմոռոխով.—Պաշտպանեցեք անասուններին վարակումից 5 3
20. Դոլգովսկի.—Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կեն-
դաններին 6 3
21. Հնգամյակի յերրորդ տարվա շնորհ 16 3
22. Գյուղատնտեսական միասնական հարկը և գ. տ. սոց. վերա-
կաուուցումը 10 3
23. Օա. Տեյնով.—Խնչպես կազմակերպել խոշոր կոլտոզի տնտե-
սությունը և նրա վարչությունը, 1-ին պրակ 8 3
24. Նույնը, 2-րդ պրակ 4 3
25. Նույնը 3-րդ պրակ 7 3
26. Ս. Դ. Բոսսաբջյան.—Անասնաբուծական կոլտոզի և նրա
մասնաշյուղերի կառավարումը 20 3
27. Ա. Մեմբերգ.—Խորհուրդների վերընարությունների հիմնական
խնդիրները 7 3
28. Խորհուրդների վերընարությունների գործնական խնդիրները 3 3

631.5

7-56

32-11
4 AUG 2010
82

Մ. ԳԻԳՈՅԱՆ

== ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ
ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ==

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЗЕНІ
Владимир Маяк
СССР

08 MAY 2013

16742

ГИГОЯН М.

Организуем уборку урожая

На армянском языке



60499.67

Уполкرایлит № 2837. Ростов на Дону.

газ-кн. тип. СККПО Ст.-ф. Б 6 125x176 Зак. № 2285. Тираж 3000

ՊԱՅԲԱՐԵՆՔ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

«Հացի համար պայքարը—սոցիալիզմի
համար պայքար է» ԼԵՆԻՆ

Մեր յերկիրը չտեսնված տեմպերով աճում և զարգա-
նում է: Արդյունաբերության հսկաների—Սելմաշի, Ստալինգր-
ադի տրակտորային գործարանի, Նարկովի տրակտորի գործա-
րանի, Չելյաբինստրոյի, Նիժնիիավոտոմոբիլի գործարանի, Մազ-
նիտստրոյի, Կուզնեցստրոյի, Դնեպրոստրոյի և այլն և այլն,
խոշորագույն, արդեն ավարտված ու ավարտվելիք 518 հա-
մալարհային հսկաների աճին ձայնակցում և խոշոր սոցիա-
լիստական դյուղատնտեսության ակերը:

Բանվոր դասակարգը իր ավանդարդի—կոմունիստա-
կան կուսակցության լենինյան դեկլարացիայամբ, վերափո-
խում է մեր յերկրի նախկին դեմքը: Կարիքի, աղքատության,
խավարի և տգիտության ցարերի «վոտչինան» վերափոխվել և
արդեն սոցիալիստական ինդուստրիայի հսկաների և համա-
տարած կոլեկտիվացման յերկրի, վորտեղ այդ ձեռք բերված
նվաճումների հիման վրա, բանվոր դասակարգը, հենվելով 12
միլիոն տնտեսություններից բաղկացած կոլխոզնիկների վրա,
վոչնչացնում է կապիտալիստական վերջին դասակարգը—
կուլակին:

Սոցիալիզմը, վորի առաջին շրջանն ենք մտել արդեն, շարունակում է իր հաղթական յերթը:

Կոլխոզներն արդեն վերջացրել են բոլշևիկյան յերկրորդ ցանքի կամպանիան: Նրանք արդեն ունենն բավականի փորձառություն կոլխոզային աշխատանքների կազմակերպման և կոլխոզի առավելությունների մասին: Նրանք գիտեն, վոր կոլխոզում աշխատանքն ավելի մեծ արդյունք է տալիս, աշխատանքի հասարակական կազմակերպման, գործիքների ավելի լրիվ ոգտագործման և մանավանդ, ավելի կատարելագործված մեքենաներ ու գործիքներ, աշխատանքի որ, սոցիալիստական ձևեր ներմուծելու շնորհիվ:

ՄՏԿ և սովխոզների փորձերը համոզել են արդեն կոլխոզնիկին այդ բանում: Համատարածի ավարտումը Հյուսիսային Կովկասում և ուրիշ ռայոններում պերճախոս փաստեր են կոլխոզարժման առավելությունների ստուգման՝ տասնյակ միլիոնների կողմից:

Յեւ, ինչպես ասել է Լենինը, միլիոնների ձեռքով ըստուգված գործը անհաղթելի յե: Կոլխոզարժման գործը անհաղթելի յե, չնայած կուլակների և նրանց ագենտուրայի վտանգություններին, չնայած դասակարգային բոլոր թըշնամիների հուսահատ—կատաղի դիմադրության, վորովհետև տասնյակ միլիոններ արդեն իրենց սեփական փորձով համոզվել են կոլխոզի առավելություններում:

Այդ է պատճառը, վոր այսօր մոտ 12 միլիոն նախկին մանր գյուղացիական տնտեսությունները, կոլեկտիվներում միացած, առաջ են շարժում սոցիալիզմի կառուցման գործը՝ բանվոր դասակարգի հետ ձեռք-ձեռքի տված և վերջինիս ղեկավարությամբ:

Բայց յուրաքանչյուր շարժում կարող է հաղթական քայլերով շարժվել միայն այն դեպքում, յերբ այդ շարժման

հաշվառք կա, յերբ ուսումնասիրվում է շարժման դրական կողմերի հետ նաև նրա բացասական կողմերը, բաց ու թերի կողմերը և ժամանակին վերացվում են շարժումը խանգարող արգելակները:

Անցյալ տարվա աշխատանքների ուշադիր ուսումնասիրության կարևորությունը շատ մեծ է և կատարվում է արդեն: Մենք արդեն ունենք մի շարք թվեր և փաստեր, վորոնք ասում են կոլխոզարժման հզորացման և հսկայական նվաճումների մասին: Մենք գիտենք, որինակ, վոր կոլխոզում միջակ և չքավոր տնտեսությունը անցյալ տարի ստացել է էրկրապատիկ յեկամուտ անհատականի համեմատությամբ և այլն: Բայց մենք գիտենք և այնպիսի փաստեր, վորոնք միայն խանգարում են կոլխոզային աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելուն: Քիչ չեն դեպքեր, յերբ կոլխոզում ուշադրություն չեն դարձնում բերքի բարձրացման, բերքահավաքը կազմակերպելու վրա, վորի շնորհիվ կորչում է բերքի մի մասը, կորչում է հետևապես և կոլխոզի յեկամտի մի մասը: Տուժում են այդ բանից և իրենք կոլխոզնիկները և պրոլետարական պետությունը և բանվոր դասակարգը, վորովհետև բերքի մի մասի կորուստը, պակասեցնելով կոլխոզնիկի յեկամուտը, պակասեցնում է պրոլետարական պետությանը ծախելիք ապրանքային մասը և, վերջապես, ազդում է մեր արդյունաբերությանը հումուլյի մատակարարելու և բանվորների պարենավորման վրա:

Անցյալ բերքահավաքի կամպանիայի ընթացքում վորոշ կոլխոզներում պատահել են դեպքեր, յերբ ամբողջ բերքը չի հավաքվել. մի մասը մնացել է դաշտում և փչացել: Որինակի համար, այդպիսի դեպք պատահել է «Հոկտեմբեր» կոլխոզում (Կորենովսկի ռայոն, Հ. Կ.):

Ինչ ասել կուզի, վոր այդպիսի դեպքերը զենք են դառնում կուլակների ձեռին, կոլխոզների դեմ պայքարելու գործում: Ինչ ասել կուզի, վոր այդ դեպքերից ծնունդ են առնում զանազան աջ ոպորտունիստական—կուլակային տերամադրություններ, թե «առատաբեր» տարիներում միշտ ել բերքի վորոշ մասը փչանում ե»:

Կոլխոզում վոչ մի հատ ցորեն, վոչ մի տերև ծխախոտ, բերքի ամենաչնչին մասն անդամ չպիտի փչանա: Ահա թե ինչպիսի լողունգի տակ պիտի անցկացնել այս տարվա բերքահավաքի կամպանիան:

Պետք ե հիշել, վոր պրոլետարական կենտրոնները պարենավորելու և մեր սոցիալիստական արդյունաբերությանը հումութ մատակարարելու խնդիրները, ինչպես նաև կոլխոզների ամրապնդման և հետագա զարգացման խնդիրների հանգույցը գտնվում ե բերքի բարձրացման և բերքահավաքի ուղիղ անցկացման մեջ: Լուծելով այդ յերկու կարևոր խնդիրները, կոլխոզնիկները խոշոր չափով աջակցում են նաև հիշյալ խնդիրների լուծմանը:

ԻՆՁԻՑ ԱԿՍԵԼ

Գյուղատնտեսական աշխատանքների մեջ ամենակարևորները վար ու ցանքսի, քաղհանի, բերքի հավաքման աշխատանքներն են:

Ծանփսով միայն սկսվում են գյուղատնտեսական աշխատանքները: Այս պարզ ե բոլորիս: Բավականանալ նրանով, վոր արդեն ցանեցինք (կամ ծխախոտի մշակման ուսյոնում տնկեցինք) — այդ արդեն անմտությունն ե, քանի վոր, ինչպես դարձյալ պարզ ե բոլորիս, վոչ միայն

պրոպաշնի և տեխնիկական կուլտուրաները, այլ նույնիսկ հացաբույսերը պահանջում են մի, յերկու և նույնիսկ յերեք և ավելի անգամ քաղհան, դաշտային ֆլասատունների դեմ կռիվ, ժամանակին հավաքման մեքենաների և գործիքների նորոգում, ժամանակին նախապատրաստվել խոտհարին, հնձին, կալին, ծխախոտի տերևների կտրելուն և փնացած աշխատանքների կատարմանը, անասուններին խնամելուն և այլն և այլն:

Վորպեսզի այս բոլոր աշխատանքները կատարվեն առանց միմիանց խանգարելու և ժամանակին, հարկավոր ե, վորպեսզի կոլխոզի վարչությունը հաշվի առնի. 1) աշխատանքի ընդհանուր չափը, կոլխոզի բանվորական ուժը և յեղած գործիքները, 2) հաշվի առնի աշխատանքի յուրաքանչյուր տեսակի համար պահանջվելիք բանվորական ուժն ու միջոցները և յեղած բանվորական ուժը բաժանի այդ աշխատանքների տեսակների մեջ, 3) աշխատանքի ավելի լավ կատարման համար բրիգադներ կազմի, բրիգադիր նշանակելով այն ակտիվ-կոլխոզնիկներին, վորոնք ցույց են տվել իրենց վորպես հարվածային աշխատողներ, 4) աշխատանքների կայուն նորմա նշանակի, 5) անմիջապես անցնի (յեթե արդեն չի անցել) դործավարձին (ըստ աշխատանքի քանակի և վորակի յեկամուտի բաժանմանը) աշխատանքային որով հաշվելով յուրաքանչյուր կոլխոզնիկի մասնակցությունը կոլխոզի յեկամուտում, քաջալերման և տուգանքի սխառեմ մասնի լավ և վատ աշխատանքի համար:

Ուրեմն կոլխոզում գլխավոր տեղն են բռնում հաշվառքը, աշխատանքի ուղիղ կազմակերպումն ու յեկամուտի ուղիղ բաժանումը:

Հարկավոր ե սկսել հաշվառքից, աշխատանքի պլանը կազմելուց և այդ պլանի կատարման շուրջը բոլոր կոլխոզ-

նիկներին ուշադրութիւնը կենտրոնացնելուց: Պլանը կարենետային կարգով կազմելուց և բյուրոկրատական մեթոդներով անցկացնելուց—այդ «ձախ» անմտութիւններէից հըրաժարվել ե պետք ընդմիջու: Պլանի կատարելը պետք ե սպահովել արտադրական խորհրդակցութիւններին միջոցով, կոլխոզնիկներին ամենալայն մասնակցութեան միջոցով:

Միայն այս կերպ աշխատանք կազմակերպելով կարելի կլինի վերացնել այնպիսի պակասութիւնները, վորոնք անցյալ տարվա պրակտիկայում գոյութիւն ունեցին: Որինակ, աշխատանքի դուրս չգալը, աշխատանքը «տղամարդու» և «կնոջ» աշխատանքների բաժանելը և նման ուրիշ բացասական կողմեր:

Յեթե աշխատանքի կայուն նորմա լինի, յեթե յուրաքանչյուր կոլխոզնիկ իմանա, թե ի՞նչքան աշխատանքային ուր ե ունենալու այս կամ այն աշխատանք կատարելու դեպքում, ապա նա ե՛լ չի փախչի աշխատանքից, ե՛լ չի նայի վորոշ աշխատանքի վրա վորպես «կնոջ» աշխատանքի վրա, այլ կձգտի աշխատելու լավ և շատ, վորպեսզի ավել մաս ունենա յեկամուտի մեջ, վորպեսզի պրեմիա ստանա:

Վոչ պակաս նշանակութիւն ունի աշխատանքի կազմակերպման տեսակետից յերեխաների համար մսուր ու մանկապարտեզ կազմակերպելը, հաճարակական խոհանոցներ ու ճաշարաններ կազմելը:

Սակայն այս խնդիրներումն ել չափ ու՞սահման անցկինալու դեպքերից, «ձախ» քաղաքացրութիւններից պիտի դզուշանալ ինչպես նաե նրանց թերազնահատման ոպորտունիստական ավելի ֆլասակար տրամադրութիւններից: Անցյալ տարի դեպքեր են պատահել, յերբ մանկամսուր կամ ժանկապարտեզ կազմակերպելու համար ահազէին փողեր են

ծախսել—նոր բնակարաններ կառուցել, վորը վատ ե աղէկ կոլխոզի ֆինանսական դրութեան վրա:

ՎՈՐՈՇ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԲՐԻԳԱԴԱ

Հաշվառքից հետո կարևոր ե կոլխոզի հողագործական աշխատանքը հատուկ մասերի բաժանել և ամեն մի հողամասին հատուկ բրիգադ ամրացնել, վորը պատասխանատու յե այդ հողամասում կատարվելիք աշխատանքների համար: Յուրաքանչյուր բրիգադ ու բրիգադի անդամպիտի գիտենա, թե ի՞նչ աշխատանքներ ե կատարելու, վո՞րտեղ ե աշխատելու և ինչքան ժամկետ ունի այս կամ այն աշխատանքը կատարելու համար:

Յուրաքանչյուր հողամասին ամրացվում ե հատուկ բրիգադա: (Այս ամրացման ժամանակ հաշվի պիտի առնել, վորպեսզի հողամասը մոտիկ և հարմար լինի տվյալ բրիգադին: Այն պահանջը ավելի հրամայողական ե Սոչու և Հայկական ռայոնների գյուղերի համար, նրանց չափազանց ցրվածութեան պատճառով): Յուրաքանչյուր բրիգադա պատասխանատու յե այդ հողամասի համար: Վորպեսզի յուրաքանչյուր բրիգադի անդամ աշխատանքով ապահովված լինի զաշտային աշխատանքների ամբողջ սեզոնում՝ հողամասերի բաժանման ժամանակ պիտի հաշվի առնել կուլտուրաների տեսակը, նրանց աշխատանքապահանջկոտութիւնը և այլն, այնպես, վորպեսզի մի հողամաս ավելորդ բանվորական ուժ չունենա մյուս հողամասի հաշվին: Այս բոլորը հարկավոր ե նրա համար, վորպեսզի աշխատանքի գընալ-գալը շատ ժամանակ չխլի, աշխատանքի տաք ժամանակ մի հողամասից մյուսը մարդ չհետվի և աշխատանքի ընթացքը կանոնավոր լինի:

Յուրաքանչյուր բրիգադ իր հերթին պիտի բաժանվի, ըստ աշխատանքի պահանջի, խմբակների—թեթև, միջակ և ծանր, կամ վորակավորյալ աշխատանքների—ֆլասատուների դեմ պայքարողների, քաղհան անողների, յերեխաներին նայողների, աշխատողներին կերակուր, ջուր և նյութեր բերողների, հնձողների, քշողների և այլն և այլն:

Մի խոսքով, ամեն մի կոլխոզնիկ վաղորոք պիտի գիտենա իր անելիքը և աշխատանքի սեղոնի ընթացքում (հնարավորության սահմանում) միատեսակ աշխատանք կատարել, այդ աշխատանքին ընտելանալու համար:

Բրիգադներ կազմելուց և նրանց մեջ աշխատանքը բաժանելուց հետո, պետք է ստուգել ամեն մի բրիգադին պետքական աշխատանքի գործիքների և մեքենաների դրուժյունը և հարկավոր նորոգումներ կատարել: Բացի այդ, նախորոք պիտի բաժանել բրիգադների միջև պահանջվող վորակյալ աշխատավորներ, տեղում,—գաշտում մանր նորոգումներ կատարելու համար: Անթույլատրելի պիտի համարել այնպիսի դրուժյուն, յերբ թեթև նորոգման համար մարդիկ ժամանակ են կորցնում, տուն են գալիս, վոր տանը կատարեն այդ նորոգումը:

Խիստ կարևոր է դաշտային տաք աշխատանքների ժամանակ հասարակական-շարժական խոհանոց կազմակերպելը, վորը մի կողմից անագին ազատ ձեռքերի խնայողություն կտա, ազատելով կանանց կերակուր պատրաստելու աշխատանքից և մյուս կողմից ավելի արդյունավետ կդարձնի աշխատողների աշխատանքը, վորովհետև նա կամ կինը կերակուր բերելու համար անագին ժամանակ պիտի վատնեն:

Մանկակական մուրներ և մանկապարտեզներ կազմակերպելը նույնպես անագին բանվորական ուժի խնայողություն կտա, ազատելով մայրերին, կամ ընտանիքի՝ աշխա-

տանքի ընդունակ ուրիշ անդամին յերեխաներին պահելուց: Ոպորտունիստական առարկություններն այն մասին, թե «հարմարություններ չկան», «չենք կարող վոչինչ անել», և այլն, անշուշտ անհիմն են, վորովհետև, ինչպես արդեն վերևում նշեցինք, բոլորովին կարիք չկա մուրների կամ մանկապարտեզների համար առանձին շենքեր շինելու, առանձին մասնագետներ հրավիրելու: Հետագայում, յերբ կոլխոզ-շինարարությունը դարգանա, վորպիսին հնարավոր է աշխատանքը լավ կազմակերպելու և կոլխոզի յեկամուտը բարձրացնելու միջոցով, այդ դեպքում հնարավոր կլինի նոր շենքեր կառուցել և մասնագետներ հրավիրել, իսկ առայժմ կարելի յե յուր գնալ դպրոցի շենք (կամ մի ուրիշ շենք) հարմարեցնելով: Մասնագետներին կարող են և պետք է փոխաբնեն կոմյերիտական կազմակերպությունից նշանակված ներկայացուցիչները և հատուկ կուրսերում սովորած կոլխոզուհիները:

Այսպիսով, բրիգադներ կազմելու հետ կապված խնդիրները, ինչպես տեսնում ենք, հեշտությամբ կարելի յե լուծել և այնպես լուծել, վոր հնարավոր դարձնի բանվորական ուժերի (վորոնք առաջ կապված եյին տնական աշխատանքների հետ) ղգալի մեծ մասի ազատվելը, կոլխոզի աշխատանքներին մասնակցելու համար, մանավանդ քաղհանի և այլ կարևոր աշխատանքների տաք ժամանակ:

Յեւ վերջապես այնտեղ, վորտեղ կոլխոզը կարողանա անցկացնել այս բոլոր ձեռնարկումները (վորոնց իրազոր-ծումն առանձին դժվարություններ չի ներկայացնում) (վո՛չ միայն աշխատող ուժերի բացը չի ղգացվի, այլ հնարավորություն կստեղծվի կոլխոզնիկներին վորոշ մասն ուղարկել սովխոզներ կամ քաղաք՝ աշխատելու:

ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՐՎԱ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Յերկրորդ և կարևոր կազմակերպչական խնդիրը դա աշխատանքի ժամերը կանոնավորելն է: Անցյալ տարվա փորձերը ցույց են տվել, վոր այս խնդրումն ել խոշոր բացեր կային: Կայուն աշխատանքային որվա կանոնավորում չկար: Մի տեղ վաղ եյին սկսում աշխատանքը, մի տեղ ուշ: Ընդմիջումները (նախաճաշի և ճաշի համար) մեծ կամ փոքր եյին լինում: մի խոսքով միատեսակութուն չկար: Այդպիսի դրությունը չէր կարող վատ չաղդել կոլխոզի աշխատանքների վրա: Յեթե մի բրիգադ կամ բրիգադի խմբակ շուտ կամ ուշ է սկսում աշխատանքը, յերկար կամ կարճ ընդմիջում է առնում, ապա այդ անխուսափելիորեն ազդում է մյուս բրիգադի կամ խմբակի վրա: Սկսվում է խոսակցութուն, թե «մենք շատ ենք աշխատում, դուք քիչ» և այլն: Ի՞նչ խոսք, վոր այդ խոսակցությունները չեն կարող նպաստել աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աշխատանքային դիսցիպլինայի ուժեղացմանը:

Ի՞նչ խոսք, վոր այդպիսի խոսքերը ոպորտունիստական խոսքեր են և վատերին ընդորինակելու տրամադրություններ կարող են ստեղծել միայն: Ի՞նչ խոսք, վոր այդպիսի արամադրությունները չեն կարող նպաստել աշխատանքի սոցիալիստական ձևերին—սոցմրցմանն ու հարվածայնությանը:

Բանվորական կամ աշխատանքային որվա կանոնավորումը միատեսակութուն ստեղծելով, վերացնում է ամեն մի այդպիսի խոսակցություններ և լայն ասպարեզ է բաց առնում սոցմրցման ու հարվածայնության տեմպերին:

Այս հարցում հարկավոր է դեկավարվել այնպիսի սկզբունքով, վոր նախ՝ միատեսակություն մտցվի աշխատանքն սկսելու, ընդմիջում սկսելու և վերջացնելու ժամերի և աշխատանքային որը վերջացնելու ժամի մեջ և յերկրորդ ապահովվի 10 ժամյա մաքուր աշխատանքային որը՝ (Մաքուր աշխատանքային որվա մեջ չի մտնում այն ժամանակը, վորը ծախսվում է գնալ-գալու և ընդմիջումների համար):

ԿԻՐԱՌԵՆՔ ՍՈՑՄՐՑՄԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅ- ՆՈՒԹԱՆ ԼՈԶՈՒՆԳԸ

Սոցմրցման և հարվածայնության ծավալումը կոլխոզի ներսում հնարավոր է դառնում միայն այն դեպքում, յերբ կազմակերպվեն բրիգադներ և յերբ նրանց աշխատանքային որը կանոնավորվի:

Յերբ կոլխոզ-կոլխոզի հետ սոցմրցման պայմանագիր է կնքում, բայց աչքաթող է անում այդ պայմանագիրը կապել կոլխոզի ներսում՝ բրիգադների և խմբակների միջև, դա նշանակում է, վոր նա սխալ է հասկացել սոցմրցման նշանակութունը և հակայական կարևորությունը: Ինչպե՞ս կարող է կոլխոզ մրցել, քանի վոր նա իր ներքին ուժերը դեռ չի կազմակերպել:

Միայն այն ժամանակ սոցմրցման հարցն ուղիղ հիմքերի վրա դրված կարելի յե համարել, միայն այն ժամանակ հարվածայնությունը իսկական հարվածային թափ կստանա, յերբ կոլխոզում բրիգադները և բրիգադում խմբակներն իրար հետ պայմանագիր կնքեն:

Բերքահավաքի աշխատանքներով շատ հեշտ է ստուգել բրիգադների, խմբակների և առանձին կոլխոզնիկների

հարվածաշնությունը: Այստեղ, միատեսակ պայմաններում և միևնույն տեխնիկական միջոցներով աշխատելու շնորհիվ շատ հեշտությամբ կարելի յե համեմատել, թե ով ինչքան և ինչպես է աշխատել: այստեղ աշխատանքի քանակին ու վորակը հեշտ է հաշվի առնել, վորովհետև ամեն մի խմբակի աշխատանքի քանակը գրվում է առանձին նարյադի մեջ, իսկ քանակը կարելի յե իսկույն իմանալ խմբակի ստացված բերքի քանակով:

Պարզենք որինակով: Մեծ-Սալա դյուղխորհրդի Բազվի 26 կոմիսարների անվան կոլխոզում (Մյասնիկյան ուայոն) յերկու բրիգադներ աշխատում են միատեսակ (տարածությամբ և հողի վորակի տեսակետից) հողամասերի վրա: Բրիգադներից մեկը այնքան բարեխիղճ է աշխատել, լավ է քաղհանել, հնձել, դիզել և այնքան խնամքով է բարձել և աշին՝ վոր բրիգադի հողամասի, ուրիշ հավասար պայմաններում, 1 հեկտարից ստացվում է 80 փութ ցորեն, իսկ մյուս բրիգադի աշխատանքի անբարեխիղճության կամ միջակ լինելու պատճառով մի հեկտարից ստացվել է 40 կամ 60 փութ:

Այս յեղանակով կարելի յե սոցմրցման արդյունքները հանրագումարել և իսկական հարվածաշնիներին քաջալերել: Այն կոլխոզը, վորն իր ներքին աշխատանքը լավ է կազմակերպել, իհարկե, կարող է մրցման հրավիրել հարեան կոլխոզներին և վստահ լինել, վոր ինքն է տանելու հաղթանակը:

Աշխատանքների, մանավանդ բերքահավաքի աշխատանքների հաջող ավարտումը պահանջում է, վորպեսզի ամեն մի կոլխոզնիկ կոլխոզի յեկամտից բաժին ստանա իր կատարած աշխատանքի քանակի և վորակի համեմատ: Բացի դրանից, հարկավոր է կոլխոզում առանձին ֆոնդ ունենալ՝ առանձին կոլխոզնիկների, բրիգադների և խմբակների աշխատանքները քաջալերելու համար:

Մեր բերած որինակը ցույց տվեց, վոր բարեխիղճ, հարվածաշին աշխատանքը միևնույն պայմաններում ավելի շատ արդյունք է տալիս: հետևաբար, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար լավ աշխատող կոլխոզնիկներին պետք է պարգևատրել:

Վորպեսզի բերքահավաքի աշխատանքներին տրվի պետք յեղած թափ և վորպեսզի այդ աշխատանքների մեջ կոլխոզնիկը շահագրգռված լինի, դրա համար կոլխոզի վարչությունը նախորդ աշխատանքի կայուն նորմաներ պիտի նշանակի աշխատանքային որվա հաշվով, և նրանց համար առանձին պրեմիաներ վորոշի: Յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է իմանա այդ պրեմիաների չափը և նրանց ինչ աշխատանքի համար նշանակված լինելը:

ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԲՐԻԳԱԴ ԻՐ ՊԼԱՆԸ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱ

Բրիգադի աշխատանքի հաջողությունը կախված է նաև նրանից, թե ինչ չափով բրիգադը սեղոնի ընթացքում պլանաչափ է կատարում իր աշխատանքը, թե վճի խմբակում, ինչպես է աշխատանքի դրությունը:

Բրիգադի համար պլանը կազմում է վարչությունը, պլանը կրում է կարգադրի (նարյադ) ընույթ. պլանում նշանակվում են. 1) աշխատանքի տեսակները և նրանց կատարելու հերթը (յեզիպտացորենի քաղհան, բանջարանոցի քաղհան, վորոգում, ծխախոտի քաղհան, 2) ինչքան տարածության վրա յեն կատարվելու այդ աշխատանքները, 3) աշխատանքներն սկսելու և վերջացնելու ժամկետները: Բացի այդ, պլանում նշանակվում է, թե ինչքան լծկան, ինչքան գործիք է ինչքան բանվորական ուժ է պետք աշխատանքի ամեն մի տեսակի համար՝ մի հեկտարին:

Այդ պլան-նարյադն ստանալուն պես բրիգադիրը պը-
լանը պիտի դնե բրիգադի քննությանը և հանդիպական պլա-
նի առաջադրանքի համար: Այստեղ հարկավոր և այնպիսի
նույթ տալ պլանի քննությանը և հանդիպական պլանի
առաջադրանքին, վոր միանգամայն հնարավոր լինի մանրա-
կրկիտ մշակելու նորմաները, համաձայնեցնելու պլանները
հարվածային տեմպերին և ժամկետից առաջ կենսագործելու
ամբողջ պլանը:

Այդ կարելի չե անել միայն այն դեպքում, յերբ բրի-
գադի ժողովները լինեն բազմամարդ, յերբ կոլխոզնիկներ
առաջարկությունները լուրջ ուշադրության առնվեն, յերբ
արժեքավոր առաջարկությունները խրախուսվեն պրեմիա-
ներով, յերբ բյուրոկրատիզմն ու քաշքուշը (վոլոկիտա)
դուրս շարտվեն կոլխոզից և յերբ, վերջապես, բոլշևիկյան
ինքնաքննադատությունը լայն կերպով ծավալվի և չճնշվի:
Այստեղ մենք բերում ենք պլան-նարյադի որինակելի
նմուշը: (Տես, հաջորդ եջում):

Դիմա ոչմոթոտոտոտ		
Մյուստոտոտոտ մթոտոտոտ		
Մի հետարի հա- մար պահանջվում են	Բոլոր աշխ. հա- մար պահանջվում են	Բոլոր աշխ. հա- մար պահանջվում են
	Իձկան	Իձկան
	Վոտեզդի	Վոտեզդի
Մոտոզդիդի . տ . Գ.		Մոտոզդիդի . տ . Գ.
Մի հետարի հա- մար պահանջվում են	Բոլոր աշխ. հա- մար պահանջվում են	Բոլոր աշխ. հա- մար պահանջվում են
	Իձկան	Իձկան
	Վոտեզդի	Վոտեզդի
Մոտոզդիդի . տ . Գ.		Մոտոզդիդի . տ . Գ.
Անխտանքի ժամկետները	Մի հետարի հա- մար պահանջվում են	Մի հետարի հա- մար պահանջվում են
	Իձկան	Իձկան
	Վոտեզդի	Վոտեզդի
Մոտոզդիդի . տ . Գ.		Մոտոզդիդի . տ . Գ.
Կ մոտոզդի . տ . Գ.		

Կոլխոզի վարչություն

(Կազմել են՝ ողավելով Կոպալչենսկու «Բաղհանի կազմակերպում» հոդվածից և
Մ. Ա. Ֆրոլովի և Ն. Ս. Զախարովի «Բրիգադ» գրքուկից, Մ. Գ.)

ՄԱՍՏԱՆՔ

ՄԱՍՏԱՆՔ



ԱՇխատանքի կազմակերպումը բրիգադի ներսում

Բրիգադիերը իր հերթին պլանը քննելուց և հանդիպա-
կան պլանը կազմելուց հետո աշխատանքը բաժանում են խում-
բակներին մեջ, վորոնք կարող են կազմվել աշխատանքների
ծանրության և յեղած բանվորական ուժի հաշվառքի հիման
վրա:

Աշխատանքներն ըստ իրենց ծանրության բաժանվում
են—1)

ա) Թեթև աշխատանքների

- 1) Ձի քշելը,
2. Աղբ կրելը, նմանապես սերմացու կրելը առանց բառ-
նալու և դատարկելու,
3. Կալի ժամանակ դարման կրելը,
4. Հովվին ոգնելը,
5. Ցանքի ժամանակ ոգնողը,
6. Կարտոֆիլն ակոսում թաղելը,
- 7) Բերքահավաքի ժամանակ կարտոֆիլի հավաքելը:

բ) Միջակ ծանրության աշխատանքների

1. Կուլտիվատորով աշխատելը,
2. Արմատուղները ձեռքով քանդելը,
3. Քաղհանը, շարքերի նսարացումը, թորխով փորելը,
արմատի թուլացնելը և շթլելը,
4. Շիթիլների քանդելը,
5. Ձիու յեղանով քանդելը,

1) Ոգովել եմ կոլեզիոնիների և կոլեզիոնիների խորհրդակցու-
թյան ընդունած բանաձևից: (Մ. Գ.)

6. Մեքենայից հետո խուրձ կապելը,
7. Վարելը,
8. Հովվությունը,
9. Կարտոֆիլը գութանով քանդելը,
10. Արմատուղների քանդելը,
11. Շարքամիջյան տարածություններ վարելը,
12. Հանքային պարարտանյութերի արտում ցրելը,
13. Դեղերի վրա նշան դնելը,
14. Խուրձերի մի տեղ հավաքելը:

գ) Ծանր յեկ վորո՞ւ փորձ պահանջող աշխատանքների

1. Անտառամաքրումը
2. Արտերի հերկելը,
3. Կով կթելը,
4. Անասունի խնամելը,
5. Վոչխարապահությունը,
6. Ձիապահությունը,
7. Խոզապահությունը,
8. Թռչնապահությունը,
9. Մեղվապահությունը,
10. Ճագարապահությունը:

դ) Վորակյալ աշխատանքներ են

1. Տրակտորով վարելը,
2. Ձեռքով ցանելը,
3. Դարբնությունը,
4. Ատաղձագործությունը,
5. Հյուանությունը,
6. Հնոցներ վառելը (լոկոմոբիլի),
7. Կալիչ մեքենայի բարարանում խուրձեր նետելը:

Այս աշխատանքների նորմաները միմիանց հետ համեմատելով գնահատվում են այսպես. միջակ աշխատանքի համար իբրև նորմա ընդունվում է մի աշխատանքային ուր, թեթեւը—յերեք-քառորդ, ծանրը—1 և մեկ քառորդ և վորակյալը—1 և կես աշխատանքային ուր:

Բացի այդ, հարվածախուլթյունը քաջալերելու համար պրեմիաներ ստանում են նրանք, ովքեր վոր*.)

ա) կատարել և գերակատարել են պլանը,

բ) կատարել են պլանը ժամանակից առաջ,

գ) գերակատարել են վորակային ցուցանիշները,

դ) պայքարել են մթերքների, մատերիալների, վառելանյութի, անասունների կերի խնայողության համար և պայքարել են նաև կորուստների դեմ,

յե) մաքուր են պահել գոմերը,

զ) իջեցրել են աշխատանքի ծախսերը,

ե) բերքը հավաքել են ժամանակին և առանց կորուստի,

ը) Դյուռեր են արել և քարելավել են տնտեսությունը իրենց առաջարկություններով:

Պրեմիաներ ստանում են թե այս բոլոր ցուցանիշների և թե առանձին ցուցանիշների համար:

Մինչև հիմա մենք խոսում եյինք միայն լավ և շատ աշխատանքների քաջալերման մասին:

Բերքահավաքման հաջողության համար անհրաժեշտ է, վորպեսզի վատ աշխատողները և աշխատանքից փախչողները ստանան իրենց արժանի պատիժը: Այս նկատառումներով, կոլխոզնիկների և կոլխոզուհիների խորհրդակցությունն առաջարկում է գործադրել հետևյալ միջոցները՝ աշխատանքային դիսցիպլինան խախտողների դեմ:

*.) Վերցրել ենք կոլ. և կոլխոզուհիների խորհրդակցության վորոշումներից:

ա) հասարակական հանդիմանություն:

բ) Նկատողություն բրիգադիրի կամ վարչության անունից:

գ) Նյութական տուժ (վորը հատկացվում է մրցանակաբաշխության ֆոնդին):

դ) Ավելի ցածր աշխատանք տալ:

յե) Վորոշ ժամանակով աշխատանքից հեռացնել:

Իբրև ծայրահեղ միջոց, անբուժելի ծուլերին և ուրիշի հաշվին ապրողներին հասարակական ժողովների վորոշումամբ կոլխոզից հեռացնել:

Պատահում է, վոր կոլխոզն է խցկվել կուլակը կամ նրա գործակիցը—աջ ձեռքը, վորը դիտավորյալ կերպով փնասում է կոլխոզի գույքը, կամ բացարձակ ֆասարարություն է անում: Նման գործողությունները համարվում են քրեական հանցանքներ և մեղավորները պատժվում են պրոլետարական դատարանի միջոցով:

Խմբակները և առանձին կոլխոզնիկները լավ պետք է իմանան այս բոլորը, վորպեսզի հասկանան, թե ի՞նչ է սպասում իրենց լավ կամ վատ աշխատելու դեպքում:

Բրիգադիրը խմբակավարների հետ միասին իրենց ամբողջ բանվորական ուժը, ըստ վերև բերված աղյուսակի, բաժանում են խմբակների միջև և ամեն մի խմբակին հանձնում աշխատանքի առանձին տեսակներ: Յուրաքանչյուր խմբակ իր աշխատանքի համար ստանում է անհրաժեշտ գործիքներ կամ մեքենաներ (աշխատանքի միջոցներ) և աշխատանքի նարյադ, վորտեղ գրվում է, թե քանի մարդով ի՞նչ միջոցներով, վորտեղ և ի՞նչ ժամկետում ի՞նչպիսի աշխատանք պիտի կատարել:

Այստեղ բերում ենք նարյադի նմուշը:

ՆՁ..... խմբակալար ընկ.....
Առաջարկվում է ներմուծել կոխողներից հետ կատարել
ծանկեսում աշխատողներին որպես ընթացում հետևյալ աշխատանքներ

ժանտխու- թխուններ	խամս ուլի -տժիդատառովն դ յրախտաշուշ- ովն զտմատուկ
	(նվերովդունուն զտիտ ոտիտուն րտիկիլիտ) միտո -ովն զտմատուկ
	խամս ուլի -տժիդատառովն մրատառաշուշ վժիդատառովն
	միտո վժիդատառովն
	միտաթխաշուշ -տառուն դ շուշ
	Անուն, հալաունուն, աղղաունուն
վիմտի տոմ	ճի

Աշխատանքը սկսվել է “
Ավետացնել.”

Այնպիսով

1. Լավ աշխատանքի համար " աշխատանքի համար 1. Վատ աշխատանքի համար " աշխուր
2. Ժամկետից առաջ կատարելու համար " 2. Ժամկետին չավարտելու " " "
3. " " " " " " " " " " " "

一
 二
 三
 四
 五
 六
 七
 八
 九
 十
 十一
 十二
 十三
 十四
 十五
 十六
 十七
 十八
 十九
 二十
 二十一
 二十二
 二十三
 二十四
 二十五
 二十六
 二十七
 二十八
 二十九
 三十
 三十一
 三十二
 三十三
 三十四
 三十五
 三十六
 三十七
 三十八
 三十九
 四十
 四十一
 四十二
 四十三
 四十四
 四十五
 四十六
 四十七
 四十八
 四十九
 五十
 五十一
 五十二
 五十三
 五十四
 五十五
 五十六
 五十七
 五十八
 五十九
 六十
 六十一
 六十二
 六十三
 六十四
 六十五
 六十六
 六十七
 六十八
 六十九
 七十
 七十一
 七十二
 七十三
 七十四
 七十五
 七十六
 七十七
 七十八
 七十九
 八十
 八十一
 八十二
 八十三
 八十四
 八十五
 八十六
 八十七
 八十八
 八十九
 九十
 九十一
 九十二
 九十三
 九十四
 九十五
 九十六
 九十七
 九十八
 九十九
 一百

Բրիգադի աշխատանքները կախված են խմբակների աշխատանքի կազմակերպումից: Պահանջվում է, վորպեսզի խմբակներն ամենալայն չափով ծանոթանան բերքահավաքի ընթացքում իրենցից պահանջվելիք աշխատանքների հետ, ծանոթանան այդ աշխատանքների նորմայի, վարձատրու-թյան պայմանների, նշանակված պրեմիաների և տուժերի հետ:

Բոլոր կոլխոզնիկներին անհրաժեշտ է ծանոթացնել նաև այստեղ բերված ցուցանիշների հետ: Բացի այդ, բրիգադային արտադրական խորհրդակցություններում և խմբակների ժողովներում քննության պետք է առնել հետագա աշխատանքները և վերջիններիս ավելի հաջող կատարման հնարավորությունները:

Արտադրական խորհրդակցության միջոցով հնարավոր
կլինի ապահովել մասսաների լայն մասնակցութունը կո-
խողի աշխատանքներին, արտխորհրդակցութունը համար-
վում է մասսայական մասնակցության ձև։ Արտխորհրդակ-
ցությունները կազմակերպվում են կոխողի վարչության
կից՝ ընդհանուր հարցերը՝ քննելու համար, կազմակերպվում
են նաև բրիգադներին կից՝ առանձին ճյուղերի գծով։ Մեզ
այստեղ հետաքրքրողը բրիգադային արտադրական խորհր-
դակցությունն է այն պատճառով, վոր բերքահավաքի աշ-
խատանքներն ուղիղ և ժամանակին կատարելը բրիգադից
է կախված, վորը և պատասխանատու յի վորոշ հողամասի
համար։

Բրիգադային արտադրական խորհրդակցությունը կազմավորում ե բրիգադին կից, հարվածային և ակտիվ կոլխոզնիկներից և մնացյալ կոլխոզնիկների ամենալայն մասնակցությամբ: Խորհրդակցությանը ղեկավարում ե բրիգադը, իսկ վերջինիս աշխատանքի արժեքը մասամբ կախում ունի խորհրդակցության ղեկավարությունից:

Մեր (հայկական) պայմաններում, վորտեղ դեռ գոյություն ունեցող հին նահապետական սովորությունները արգելք են լինում կնոջ ակտիվ մասնակցությանը հասարակական աշխատանքներին և վորտեղ կանանց առաջ քաշելու հարցն ավելի հրամայողական պահանջ ե, հարկավոր ե ամեն մի բրիգադում կազմակերպել կանանց համար առանձին արտադրական խորհրդակցություն, վորը քննում ե գլխավորապես կանանց աշխատանքները:

Իհնչ խոսք, վոր արտադրակցությունները արդյունավետ կարող են լինել միայն այն դեպքում, յերբ յուրաքանչյուր կոլխոզնիկի նախաձեռնությունը և փորձը լիովին ոգտագործվեն, յերբ մասսայական նախաձեռնության առջև վոչ մի արգելք, «չինական պարիսպ» չբարձրանա: Մենք արդեն ասացինք, վոր բյուրոկրատական վերաբերմունքն ու քաշքուշը մեռցնում են մասսաների նախաձեռնությունը, սառեցնում նրանց վերաբերմունքը դեպի արտադրական խնդիրները և զրոյի հավասարեցնում վերջիններին նշանակութունը: Բյուրոկրատիկ վերաբերմունքը կոլխոզնիկների մեջ առաջացնում ե այնպիսի տրամադրություն, թե «իհնչ ավել-ալակա խոսեմ, քանի վոր միևնույն ե, ինձ չեն լսի, իրենց ուզածը կանեն»: Իսկ այդպիսի տրամադրությունները մեծապես կջլատեն բերքահավաքի աշխատանքներին, վորովհետև կկաշկանդեն ակտիվ և նախաձեռնություն ունեցող կոլխոզնիկների մասնակցությունը, կքնեց-

նեն աշխատանքի արտադրողականության բարձրացման համար արված առաջարկությունները, արգելք կլինեն կոլխոզի յեկամուտը բարձրացնելուն, կնսեմացնեն կոլխոզի առավելությունները և կոլխոզին դենք կդարձնեն կուլակի ձեռքում:

Արտադրական խորհրդակցությունը բրիգադի համար պիտի դառնա բոլշեկյան ինքնաքննադատության և կոլխոզնիկների նախաձեռնությունը հայտնաբերող գլխավոր միջոցը: Այստեղ կոլխոզնիկները պիտի արտահայտվեն և լայն քննության յենթարկեն այն միջոցառումները, վորոնց նպատակն ե վերացնել թերությունները, լավացնել աշխատանքի կազմակերպչական մեթոդները և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը. այստեղ անարգանքի սյունին պիտի գամվեն բոլոր նրանք, ովքեր խանգարում են վերոհիշյալ հարցերի լուծմանը: Այստեղ, վերջապես, պիտի կերտվեն կոլխոզնիկ գյուտարարների առաջին կադրերը, վորի համար խորհրդակցությանը պիտի փոխարինե բանվորական գյուտարարության բյուրոն:

Իհնչ խոսք, վոր տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները ամեն կերպ պիտի հսկեն, ղեկավարեն և ուղիղ ընթացք տան բրիգադային խորհրդակցություններին: Իհնչ խոսք, վոր ամեն մի կուսակցական և կոմյերիտ կոլխոզնիկ անպայման պիտի հաճախի այդ խորհրդակցությունները և նրա աշխատանքներից վերացնի այն բոլոր թերությունները, վորոնք գոյություն ունեն և կամ կարող են հայտնաբերվել հետագայում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՔԸ ՅԵՎ ԳՈՐԾԱՐՔԻ Կ Ի Ր Ա Ռ Ո Ւ Մ Ը

Խորհուրդների համամիութենական Ծ-րդ համագումարը ընկ. Յակովլևի կոլխոզինարարության մասին տված

զեկուցման առթիվ ընդունած իր վորոշման մեջ շեշտում է, վոր «կոլխոզային յեկամուտների բաշխումն ըստ սկզբունքի—ով շատ և լավ աշխատի, նա ավելի կստանա»,—կանոն պիտի դառնա բոլոր կոլխոզների և կոլխոզնիկների համար: Ըստ վորում, գյուղատնտեսական հիմնական աշխատանքներում (վար, ցանք, քաղհան, բերքահավաք, կալս) գործաւժը, աշխատանքային որերով հաշվված, լայն մասնաշաղկապ ծավալ պիտի ստանա»:

Համագումարը դտավ, վոր աշխատանքի արտադրողականության բարձրացման միակ ուղիղ ճանապարհը—դա ամեն մի կոլխոզնիկի կատարած աշխատանքի հաշվառքը և գործարքն է: Ով ինչքան և ինչ վորակի աշխատանք տա, նա այնքան էլ կստանա: Մենք արդեն խոսեցինք այդ ըսկզբունքի անհրաժեշտության և նշանակության մասին: Մեզ հարկավոր է այստեղ կանգ առնել հաշվառքի նշանակության և անցկացման ձևերի մասին: Հաշվառքի նշանակությունը կայանում է նրանում, վոր միայն հաշվի առնելով կարելի յե իմանալ թե հիվ, ինչքան է աշխատել և ինչպես է աշխատել: Իսկ առանց այդ իմանալու յեկամուտն ուղիղ բաժանելը միանգամայն անհնարին է: Չի կարելի թույլ տալ այնպիսի սխալներ, վորոնց մասին պատմեց ընկ. Յակովլևը 6-րդ համագումարում, —«Ահա ձեզ մի կոլխոզ—ասաց ընկ. Յակովլևը—վոր կոչվում է Մալոխովկա: Այդ կոլխոզում հաշվառք չկար: Յեվ այժմ, մոտավորապես 2 ամիս, բոլոր կոլխոզնիկներն զբաղված են մի գործով—ձգնում են մտաբերել, թե հիվ, ինչքան և վճրտեղ է աշխատել, ի հարկե, հիմա մտաբերելը բավական դժվար է: Համենայն դեպս ավելի դժվար է քան զրելը, այն ժամանակ, յերբ մարդիկ աշխատում էյին: Յերբ կոլխոզնիկներն սկսեցին «մտաբերել»—սա տեեց յերկար, տասնյակ ժողովներ, ապա պարզվեց հե-

տեյալը. կան մի աշխատունակ անդամով կոլխոզնիկներէ ընտանիքներ, վորոնց հասնում է 300—400 աշխատանքային որ: Այժմ կոլխոզի ժողովներում մարդիկ հաշվել են, վոր յեթե նույնիսկ մի որվա մեջ յուրաքանչյուրն աշխատեր յերկու աշխոր, ապա և այդ դեպքումն էլ այդպիսի ընտանիքը 300—400 աշխատանքային որ չեր կարող ստանալ: Պարզվեց, վոր մեկի ստացած ավանաները յերկու անգամ շատ են յեղել, քան իրեն հասնելիքը. մյուսինը, ընդհակառակը, իրեն հասնելիքի կեսը նույնիսկ չեն կաղմել, իսկ յեկամուտն արդեն բաժանել են»:

Հաշվառքի բացակայությունը շատ կոլխոզներում անցյալ տարի տնտեսական տնային և վեճերի պատճառ դարձավ, կոլխոզնիկների մեջ շատ անախորժություններ առաջ բերեց, ուրախացնելով կուլակին և նրա գործակիցներին:

Կուլակը այդ փաստերը մատի փաթաթան է շինում, գնում է աշխատողի մոտ և քմծիծաղով հարցնում. —«Հը, ինչպես են գործերդ: Ասում են հաստն ու բարակը մի գին է, վայն յեկել է բարակ մանողին». կամ թե՛ «եջը դատի, ձին ուտի», «տես, Միխասը մի ջան աշխատող ունի—400 որ ստացավ, իսկ դու քո յերկու ջանով— միայն 200 որ»:

Ինչպես տեսնում ենք, հաշվառքի համար պետք է ունենալ այնպիսի մի ձև, վորն իր մեջ պարունակի բոլոր սովյալները, վորոնց միջոցով իսկապես կարելի յե իմանալ, թե հիվ, ինչքան և ինչպես է աշխատել: Մենք արդեն տվել ենք հաշվառքի մի այդպիսի աղյուսակի նմուշ (տես, էջ 22) կարելի յե առաջարկել մի այլ նմուշ ևս:

Ամիսներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
Կատարված աշխատանքը . .																															
Ստանալիք աշխույժ . . .																															
Պրեմիա ժամկետից առաջ և ավազխատանքի համար . .																															
Զեղջ վատ աշխատանքի համար																															
Ընդհանուր աշխույժ . . .																															
Ամբողջ ամսվա ստանալիքաշխույժ																															

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մենք աշխատեցինք համառոտ կերպով տալ այն անհրաժեշտ կազմակերպչական ձեռնարկումների անվանացուցակը, վորոնց շուտափույթ իրագործումը կհեշտացնի կոխողներին մեջ աշխատանքային դիսցիպլինան ուժեղացնելը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, կուլակների և յենթակուլակների վտանգությունների և հերյուրանքների դեմ հաջող պայքար մղելը: Աշխատանքներին սոցիալիստական ձև տալու կարևորությունը զգացվում է բոլոր գիտակից կոխողներին կողմից, միլիոնավոր կոխողները հարվածայինների և ակտիվիստների կողմից: Մոռում ե, վոր տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները կոմյերիտականների, ակտիվի, հարվածայինների վրա հենվելով, կուլակի դիմադրությունը ջախջախելով, կուսակցական գծից ամեն տեսակի թեքման դեմ անխնայ պայքարելով, վոչ մի ջանք և յեռանդ չխնայեն բերքահավաքի կամպանիան նախապատրաստելու և ապա մարտական տեմպերով կատարելու համար:

Պետք է հիշել միշտ, վոր կոլխոզարժումը նոր, աշխարհիս յերեսին դեռ վոչ մի տեղ տեղի չունեցած խոշոր տրենտեսություն կազմելու սոցիալիստական մեծ փորձն է: Կոլխոզիչնարարությունը հնարավոր է միայն խոշոր սոցիալիստական արդյունաբերության գոյություն պայմաններում, միայն շնորհիվ պրոլետ. պետության ֆինանսական, նյութական և կուլտուրական ոգնություն: Կոլխոզիչնարարություն առաջխաղացումը ստացել է հսկայական չափեր: Բայց չպիտի մոռանալ նաև, վոր դասակարգային թշնամին կուլակը, տերտերը, յենթակուլակը, քնասարարը, մենշևիկը, դաշնակցականը, ինչպես նաև աջ և «ձախ» կուլակային ա-

գենտները մեր կուսակցութեան ներսում ամեն մեկն իր մեթոդներով, իր «ուժերի չափով» իր դիրքերից դիմադրում ե հոյակապ շենքերի պատերին ամեն մի քար, ամեն մի քար-փիչ զննելուն: Մեր սխալները նրանց կողմից ոգտադործվում են մեր դեմ պայքարելու համար: Ուստի մեր լողունը պիտի լինի՝

Վորակյալ աշխատանք-հարվածային տեմպերով:

Բերքահավաքն անցկացնել այնպես, վոր ժամանակից ել առաջ և ամենաբարձր վորակի աշխատանքի միջոցով պլանը իրագործվի և գերիրագործվի:

Վոչ մի հատ ցորեն, վոչ մի ծխախոտի տերև, բերքի և վոչ մի չնչին մաս չպիտի կորչի այս բերքահավաքի սեզոնում:

Միայն այս լողունների տակ, միայն աշխատանքի բանակը և վորակը բարձրացնելով, մենք կանցնենք շինարարութեան ավելի բարձր աստիճաններին:

Մենք մինչև հիմա ունեյինք մանր, անհատական գյուղացիական տնտեսութիւն կառավարելու փորձը: Մենք ծանոթ եյինք խոշոր կապիտալիստական տնտեսութեան ձևերին, վորոնք բարձրանում են միլիոնավոր մանր տնտեսութիւնների վոսկորներին վրա, միլիոնավոր մանր գյուղացիութեան (միջակի և չքավորի) քայքայման գնով: Մենք այժմ սովորում ենք խոշոր, սոցիալիստական գյուղատնտեսութիւն կազմակերպել չքավորի և միջակի նյութական, կուլտուրական և կենցաղային դրութիւնը բարձրացնելով, կուսակիներին և բոլոր ուրիշ հարստահարողներին վոչնչացնելով և անդասակարգ, սոցիալիստական հասարակարգ ստեղծելով, վորտեղ մարդը մարդու կողմից այլևս չի շահագործվելու:

Այս ե մեր ուղին, վորը մենք անցնում ենք բանվոր դասակարգի և նրա ավանդարդ կոմկուսի ղեկավարութեամբ:

Այս տարի մենք ավարտում ենք սոցիալիզմի տնտեսութեան հիմքի ավարտումը: Կոմկուսի լենինյան Կենտկոմի ղեկավարութեամբ, մենք կավարտենք նաև ամբողջ շենքի կառուցումը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հյուսիսային Կովկասի Յերկրային Գործադիր Կոմիտեի Նախագահության յեվ Յերկրկովկասյան վորոշումը

1931 թվի հացի քաղհանի և բերքահավաքի կամայնի տան ուղիղ կազմակերպելը և իր ժամանակին անցկացնելը հանդիսանում և Հյուսիսային Կովկասի բոլոր կոլխոզների, մեքենայատրակտորային կայանների և չքավոր-միջակ անհատական տնտեսութիւնների տնտեսա-քաղաքական կարեւորագույն խնդիրը:

Անցյալ տարվա հացի բերքահավաքման և կայման փորձը ցույց տվեց, վոր այն կոլխոզները, վորոնք չկարողացան ուղիղ կազմակերպել և ժամանակին կատարել քաղհանը, բերքահավաքումը և կայսումը, նրանք հսկայական վնասներ կրեցին և քիչ յեկամուտ ունեցան:

Բոլշեկիյան յերկրորդ գարնան հաջող անցկացումը Հյուսիսային Կովկասում՝ համատարած կոլեկտիվացումն ավարտելու հիման վրա, սոցիալիստական սեկտորի մեջ կենտրոնացրեց յերկրամասի բոլոր տնտեսութիւնների մոտ 90 տոկոսը: Մա պարտավորեցնում և բոլոր սովխոզներին, մեքենայատրակտորային կայաններին և կոլխոզներին, վոր նրանք ամեն մի կոլխոզում, բերդադում և խմբակում այնպիսի հիմքերի վրա զնեն քաղհանին և բերքահավաքման կամայնի յերկրային նախագատրաստվելու և անցկացնելու գործը և աշխատանքի կազմակերպումը, վոր միանգամայն հնարավոր լինի լրիվ և ժամանակին կատարել հացի քաղհանը, բեր-

քահալաքը և կախումը: Սրան գուղընթաց, կոլխոզների և սովխոզների կարևորագույն խնդիրներ են նաև համառ կերպով պայքարել հնձի և կալի ժամանակ հացահատիկի կորստյան դեմ, բացառիկ խնամքոտ վերաբերմունք ցույց տալ դեպի հացահատիկի, հարզի, ծղնոտի և այլ մնացորդների պահպանումը, թույլ չտալով, վոր նրանք հրգեհիլեն, գողացվեն և այլն:

Վերոհիշյալ խնդիրներէից յիշելով, Հյուսիսային Կովկասի Յերկրային Գործադիր Կոմիտեն և Յերկրկոլխոզմուլթյունը անհրաժեշտ են համարում անցկացնել հետևյալ ձեռնարկումները:

ԲՈՒՅՍԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1. Հաստատելով Յերկրկոլխոզմուլթյան այն վորոշումը, վորը վերաբերում է յերկրամասի կոլխոզներում քաղհանի աշխատանքների կազմակերպմանը, արտադրանքի մոտավոր նորմաներով, և համարելով նրանց միանգամայն նվազագույն, պարտադրել յերկրամասի բոլոր ՄՏԿ և կոլխոզներին, վոր նրանք մաքսիմալ չափով ուժեղացնեն քաղհանի աշխատանքները:

2. Պարտաւորեցնել մարզային ռալոնական գործկոմներին, մարզային, ռալոն-կոլխոզմուլթյուններին, գյուղերի, ստանիցաների և տուլների խորհուրդներին և կոլխոզների վարչություններին, վոր նրանք լիովին ապահովեն այն ազդու միջնորդներին կիրառումը, վորը սահմանվել է Յերկրգործկոմի կողմից՝ քաղհանի և բերքահավաքի աշխատանքների համար այդ ազդումիւնումը վերաբերում է թե՛ կոլխոզային և թե՛ անհատական տնտեսություններին:

3. Քաղհանի ժամանակ տրակտորների որեկան աշխատանքի սևողությունը սահմանել առնվազն 18 ժամ:

4. Պարտաւորեցնել ՄՏԿ և կոլխոզներին, վոր նրանք կոլխոզնիկները արտոքհրդակցություններում, կանանց հատուկ արտադրական խորհրդակցություններում, կոլխոզ-

նիկներին ընդհանուր ժողովներում և կանանց հատուկ ընդհանուր ժողովներում լայն չափով վերամշակել քաղհանի աշխատանքները կազմակերպելու, արտադրանքի նորմաների, աշխատանքի կազմակերպման կանոնի, գործարքի ձևերի վերաբերյալ հարցերն և այլն:

5. Քաղհանի կամպանիայի ժամանակ բացառապես կիրառել անհատական և մանր-խմբակային գործարքը, հանձնարարելով նրա կազմակերպման մոտավորապես հետևյալ կարգը. յեգիպտացորենի մի հեկտարն ունի մոտ 40 շարք համաձայն սահմանված նորմայի, 1 հեկտար քաղհանելու համար մոտավորապես պահանջվում է 5 մարդ, կուլտիվատորով աշխատելու դեպքում, յեգիպտացորենի 8 շարքերի քաղհանումը կարող է կատարել 1 կոլխոզնիկ մի աշխատանքային օրում:

Ամեն մի կոլխոզնիկ լիովին հնարավորություն ունի վերոհիշյալ կանոնը գործադրելու, յեթե նրա բնական էր այն դեպքերը մասնակցեն աշխատանքներին և ինքն ևս առավելագույն չափով ոգտադործի աշխատանքային օրը:

1931 ԹՎԻ ԲԵՐԲԱՀԱՎԱՔԸ ՅԵՎ ԿԱԼՍԸ

Քանի վոր յերկրամասի մարզերը և ռալոններն ունեն բավարար քանակությամբ լծկան ու մեքենայական քաշող ուժ և բերքահավաքման ու կալման մեքենաներ, հետևաբար և կան հասկավոր կուլտուրաների բերքահավաքը և կալն ապահովելու բոլոր պայմանները — հետևյալ մաքսիմալ ժամկետերում.

Ռալոնների և ինքնավար մարզերի անունները	Բանվ. թիվը գյուղացիական հողմուկային հողմուկային հողմուկային	Բանվորների թիվը կալ- անել համար
1. Վ. Դոնի	15	38
2. Վեչեսկի	15	40
3. Լ. Կալիտվենսկի	15	23

Ռայոնների և ինքնավար մարզերի անունները	Բանվ. թիվը կողմնակի հարկադրված համարման համար	Բանվորների թիվը կալ- սելու համար
4. Միլերովսկի	15	23
5. Կաշարսկի	15	40
6. Տարասովսկի	15	36
7. Ոբլիվսկի	15	40
8. Մորոզովսկի	14	40
9. Տացինսկի	15	37
10. Կոնստանտինովսկի	15	40
11. ՈՒ. Բելոկալիտովինսկի	15	40
12. Կամենսկի	15	40
13. Սուլինսկի	15	33
14. Շախտինսկի	15	36
15. Կուրգանսկի	16	21
16. Տադանրովսկի	16	26
17. Նովոչերկասկի	18	43
18. Ազովյան	16	21
19. Յեյսկի	19	40
20. Ստ. Մինսկի	18	34
21. Կուչչևսկի	18	30
22. Մեչետինսկի	18	40
23. Մյասնիկյան	18	33
24. Ռամանովսկի	18	40
25. Յիմլյանսկի	18	40
26. Դուբովսկի	18	36
27. Չավետինսկի	18	46
28. Ռեմոնտինսկի	18	50
29. Զիմովնիկովսկի	18	40
30. Պրոխտարսկի	18	44
31. Գիդանովսկի	18	34
32. Բելոզլինսկի	18	29
33. Կալմիցկի	18	50

Ռայոնների և ինքնավար մարզերի անունները	Բանվ. թիվը կողմնակի հարկադրված համարման համար	Բանվորների թիվը կալ- սելու համար
34. Ն. Պակրովսկի	17	20
35. Պավլովսկի	17	24
36. Կանևսկի	16	26
37. Պրիմ. Ախտարսկի	17	20
38. Բրյուսովսկի	16	40
39. Տիխարեցկի	17	21
40. Կորենովսկի	17	21
41. Ուստ Լաբինսկի	17	21
42. Կրասնոդարի	17	26
43. Տիմաշևսկի	17	21
44. Սլավյանսկի	17	50
45. Տեմրյուկի	17	35
46. Գ. Կլյուչևսկի	15	50
47. Սևերսկի	17	39
48. Աբինսկի	17	25
49. Անապսկի	11	21
50. Կրիմսկի	11	35
51. Դեկենշիկի	12	17
52. Տուապսեյի	2	—
53. Սուչուռ ռայոն	2	3
54. Դրեչևսկի	10	55
55. Լաբինսկի	17	15
56. Մայկոպի	17	18
57. Ապշերոնսկի	17	9
58. Բելոռեչինսկի	17	16
59. Կրասնոդարսկի	17	21
60. Ն. Ալեքսանդրովսկի	17	40
61. Արմավիրի	17	20
62. Կուրգանսկի	17	19
63. Ուրադնենսկի	17	19

Ռայոնների և ինքնավար մարզերի անունները	Միջին թվով վերականգնող հոգևորական հոգևորական հոգևորական	Բանվորների թիվը կալ սելու համար
64. Նեվինոմիսկի	17	20
65. Բատալբաշինսկի	17	8
66. Վանովսկի	17	15
67. Եսենդուկի	17	17
68. Մինսկոսկի	16	50
69. Գեորգևսկի	16	46
70. Վ. Ալեքսանդրովսկի	17	40
71. Պրախլադնենսկի	17	39
72. Մոզդուկի	17	40
73. Պրիկուսկի	13	40
74. Թուրքմենսկի	18	50
75. Վինոգրևինսկի	17	36
76. Մեդվենսկի	16	48
77. Իդ. Տիշենսկի	16	30
78. Պետրովսկի	16	48
79. Բլազոդարենսկի	16	31
80. Ալեքսանդրովսկի	16	37
81. Ստավրոպոլսկի	16	24
82. Կուրսովսկի	16	21
83. Սելիգեյի	15	21
84. Չերքեզկայա	13	18
85. Կարաչաևսկի	8	4
86. Կար. Բալկարիա	13	28
87. Հյուս. Ոսեթիա	12	7
88. Իսպուլսկի	12	16
89. Չեչենսկի	11	14

Պրոպաշնի և տեխնիկական կուլտուրաների համար
ընդունել հետևյալ ժամկետները.

ա) Արևածագի բերքահավաքը սովխոզներում—12
բանվ. որ, կուլտուրներում—16,

բ) յեգիպտացորենի հավաքումը. սովխոզներում—15
բանվորական որ, կուլտուրներում—18,

գ) ճակնդեղի քանդելը և կապելը. սովխոզներում—45,
կուլտուրներում—50 բանվորական որ,

դ) բամբակի հանաքը. սովխոզներում—45, կուլտուրնե-
րում—50 բանվորական որ,

յե) ծխախոտի քաղը. սովխոզներում—45, կուլտուրնե-
րում—50 բանվորական որ:

Պարտավորեցնել մարդային և ուսումնական գործկոմ-
ներին, ՄՏԿ և ուսյկուլտոգմիություններին կուլտուրների վար-
չուլթյունների հետ միասին մշակել և բերքագնեցնել քանար-
կել այն միջոցառումները, վորոնք վոչ միայն ապահովելու
յեն բերքահավաքման կամպանիայի կատարումը վերոհիշ-
յալ ժամկետներում, այլ նաև վերջիններիս մաքսիմալ կըր-
ճատումը:

Անհրաժեշտ դեպքերում գարին, վարսակը և հաճարը
կալսել հարթիչներով (կատկա) և այլ միջոցներով, իսկ տե-
սակավոր հասկային կուլտուրաները, իբրև կանոն, կալսվելու
յեն միմիայն կալսող մեքենաներով:

Պարտավորեցնել մարդային և ուսումնական գործկոմ-
ներին մշակել և չքավորումիջակ անհատական տնտեսու-
թյունների ժողովներում քննարկել այն միջոցառումները,
վորոնց նպատակն է ժամանակին ավարտել բերքահավաքը
և կալսը այս տնտեսություններում:

Պարտավորեցնել մարդային և ուսումնական գործկոմ-
ներին և կուլտոգմիություններին, ինչպես նաև կուլտուրի
վարչություններին բերքահավաքման այնպիսի կարգ սահմա-
նել, վոր յերբ հնձված հացաբույսերը չկարողանան շուտ
կալսվել, այն դեպքում լավ չորացնելուց հետո նրանք պետք
և անմիջապես դեղերով դարավին:

Հացահատիկների կորստյան պատասխանատվությունը
դնել բերքագների և կուլտուրների վարչություններին վրա:

Հանձնարարել յերկրպագսի բոլոր կուլտուրներին և կու-
լտուրիկներին լայն չափով գործադրել հնձված հացը խրձե-
րով կապելը վոչ միայն խրձակապ մեքենաներով, այլ նաև

ձեռքով: պարտավորեցնել մարզային և ռայոնական գործկոմներին, կոլխոզմիություններին և կոլխոզների վարչություններին, վորպեսզի նրանք կոլխոզնիկներին մեջ լայն մասսայական աշխատանք կատարեն՝ այս միջոցառումի նըշանակությունը պարզաբանելու համար:

Բացառիկ նշանակություն տալով հացը ժամանակին հնձելուն և կալսելուն յերկրամասի սովխոզներում, պարտավորեցնել բոլոր սիստեմի սովխոզների գերեկտորներին:—

ա) Բոլոր նախապատրաստական աշխատանքները—ինվենտար նորոգելը, ուժերը դասավորելը, կաղերք պատրաստելը այնպես կազմակերպել և այն հաշվով, վոր հունիսի 25-ից վոչ ուշ վերջացնել բերքահավաքման կամպանիային նախապատրաստվելու բոլոր աշխատանքները:

բ) Արտադրական խորհրդակցություններին միջոցով բանվորներին մոբիլիզացիայի յենթարկելու, սոցմարցումն ու հարվածայնությունը ծավալելու հիման վրա, բոլոր աշխատանքներում մոցնել գործավաճը, վոչ միայն կատարել կենտրոնական որդանների կողմից տրված նորմաները և ցուցանիշները, այլ և գերակատարել, վճռական պայքար մղելով բերքահավաքի ժամկետերը կրճատելու համար:

Պարտավորեցնել մարզային և ռայոնական գործկոմներին, սովխոզների Կերեկտորների հետ միասին, բերքահավաքման կամպանիայի պլանները քննելիս մեծ աջակցություն ցույց տալ կոլխոզներին՝ փոխադարձ ողնության հիման վրա:

Աւխասանքի կազմակերպումը կոլխոզներում բերքահավաքի յեվ կալսի ժամանակ

1. Հացի բերքահավաքման և կալսման բոլոր աշխատանքները պետք է կատարվեն բացառապես խմբակային, մանրխմբակային և անհատական գործարքի հիմունքով և աշխատանքի ամեն մի տեսակը և չափը պետք է գնահատվեն աշխորերով: Իբրև հաստատուն կանոն, քաղհան կատարող յու-

րաքանչյուր բրիգադին պիտի ամրացվի նույն հողամասին մինչև ցանքների լրիվ հավաքումը և կալսումը:

2. Առաջարկել մարզային և ռայոնական հողբաժիններին, կոլխոզմիություններին նախադասներին և ՄՏԿ դերեկտորներին յուրաքանչյուր կոլխոզում, յուրաքանչյուր բրիգադի համար կազմել բերքահավաքի և կալսի ամեն տեսակ աշխատանքների պլան-կարգադիրներ (պլան-նարյադ): Պլան-կարգադիրները քննության պետք է առնվեն բրիգադների կողմից և մինչև հունիսի 20-ը պիտի հասնեն բերք հավաքող և կալսող բրիգադի ամեն մի խմբին, իսկ պրոպաշնտերին կալան կոլտուրաներ հավաքող և կալսող բրիգադին պլան-կարգադիրները պիտի հասնեն պրոպաշնի-տեխնիական կոլտուրաների բերքահավաքումից 2 շաբաթ առաջ:

3. Յեթե աշխատանքը սահմանված ժամկետում չի կատարված, այն ժամանակ բրիգադիքը կամ կոլխոզի վարչությունը պարտավոր են անմիջապես կոլխոզնիկների հարվածային բրիգադներ ուղարկել՝ հետամնաց բրիգադներին ոգնելու համար, վորպեսզի բերքահավաքը և կալսը ժամանակին ավարտվեն: Բացի հետամնաց բրիգադում կատարած աշխատանքային որերի վարձատրությունից, այդ հարվածային բրիգադները պետք է պարգևատրվեն 10—25 տոկոս հավելյալ վարձատրությամբ ի հաշիվ այն կոլխոզնիկների, վորոնք պակաս են աշխատել և քաղքել են աշխատանքի կատարման ժամկետը:

4. Խմբակների և առանձին կոլխոզնիկների կատարած աշխատանքները (գործարքի կարգով) ընդունում է բրիգադիքը: Բրիգադիքներին իրավունք է տրվում 10-ից մինչև 25 տոկոսով իջեցնել խմբակի կամ առանձին կոլխոզնիկների վրա հաշվված աշխորերի թիվն այն դեպքում, յեթե նրանք հանցավոր են յեղել աշխատանքի ցածր վորակի համար:

Բերք հավաքող յեվ կալսող բրիգադների յեվ խմբակների կազմակերպումը կարգը

1. Բրիգադում աշխատանքը լավ կատարելու համար պետք է կազմակերպել բերքը հավաքող առանձին խմբակ-

ներն և սովխողները պարտավոր են ապահովելու դաշտային բրիգադներին ժամանակավոր բնակարաններով (հարդե բալագաններ, վազոնետիաներ, վրաններ և այլն): Բացի դրանից, անասունների համար պետք է պատրաստել ախոռներ:

2. Յուրաքանչյուր բրիգադի համար կազմակերպել հասարակական սնունդ, յուրաքանչյուր բրիգադում նշանակել հատուկ խոհարար, դաշտային խոհանոցներն ապահովել կաթնասնեով, ամանեղենով և այլն:

3. Ամեն մի բրիգադում կազմակերպել կուլտանկյուններ, վորոնք ապահովված պետք է լինեն թերթերով, գրքերով, յեթե հնարավորութուն կա, ապա ռադիոյով, կինոյով և այլն: Կազմակերպել պատի թերթ, վորտեղ պիտի լուսաբանվեն աշխատանքների ընթացքը, գործարքի անցկացումը, սոցմրցումը, հարվածայնութունն և այլն: Կուլտուրական մասսայական աշխատանքի համար տեղերը պարտավոր են յուրաքանչյուր բրիգադի համար տեղական ուժերից կուլտաշխատողներ նշանակել:

Սրա հետ մեկտեղ բրիգադներին պետք է ապահովել բժշկական սիստեմատիկ սպասարկումով:

ՊԱՅՔԱՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Կին-կոլխոզնիկներին ամբողջովին աշխատանքին ներգրավելու նպատակով, բոլոր բրիգադներում կազմակերպել մանկամսուրներ, մանկահրապարակներ և այլն, կին-կոլխոզնիկների աշխատանքի համար ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնք հնարավորութուն տալին նրանց արդյունավետ աշխատանք կատարելու:

2. Պարտավորեցնել կոլխոզներին, լայն մասսայական աշխատանքի հիման վրա, բրիգադներում և դաշտում հանգրստյան ժամերին կազմակերպել այնպիսի հարցերի քննարկութուն, վորոնք վերաբերում են խորհուրդների 6 համագումարի վորոշումներին՝ գործարքի կազմակերպման և գյուղ-հարկի որենքների մասին. այդ հարցերից զատ, քննության

առնել նաև որական աշխատանքի արդյունքները, աշխոյն-ցիպլինայի դրությունը, կոլխոզնիկների աշխատանքի զուրազալը և այլն, միջոցներ ձեռք առնել հայտնաբերված թերությունները վերացնելու համար և վճռական պայքար մղել գործալքողների, ծուլերի դեմ և այլն:

3. Կոլխոզներում աշխատանքի ուժեղ կարգապահություն ստեղծելու նպատակով, լայն մասսայական—բացատրական աշխատանք կազմակերպելու հետ միասին կոլխոզներին հանձնարարվում է փորձել հետևյալ միջոցները.

ա) Աշխատանքի կարգը խանգարողներին դնել ցածր վարձով աշխատանքի.


բ) Ժամանակավորապես հեռացնել աշխատանքից.

գ) գործը քննել ընկերական դատարանում.

դ) նրանց վրա հաշված աշխոյների թիվը իջեցնել 10-ից մինչև 25 տոկոսով, իսկ ամենամատուցողիներին իրեն ծայրահեղ միջոց, հեռացնել կոլխոզներից: Ընկերական դատարան պետք է լինեն նաև անմիջապես դաշտում:

4. Դաշտում բրիգադների և խմբակների աշխատանքային կարգապահության և գործարքի անցկացնելու համար պայքարը, կոլխոզի ընդունած կարգ ու կանոնի խանգարման և կոլխոզի անտեսության վնասները դեմ վճռական պայքար մղելը պետք է ընթանան լայն մասսայական—բացատրական աշխատանքի վուզլնությից:

Յերկրգործիում և Յերկրկոլխոզմիությունը յերկրամասի մարդային, ռալյոնական և ստանդանների կազմակերպությունների, ինչպես նաև կոլխոզնիկների և սովխողների ու մՏԳ բանվորների լայն մասսաների ուղադրությունը հրավիրում են այն բանի վրա, վոր Հյուսիսային Կովկասում համատարած կոլեկտիվացման յերկրամասում, չնայած միշտը զժվարությունների, այնուամենայնիվ կան այն բոլոր պայմաններ, վորոնք ապահովելու յեն բերքի լրիվ և ժամանակին հավաքումը, գյուղատնտեսության մեկ կորուստների պակեցնելը, սրա հիման վրա կոլխոզների նյութական ամրապնդումը և կոլխոզնիկների նյութական—կուլտուրական մակարդակի բարձրացումը:



29. Ամրապնդելը խորհուրդները (պրեեսա)	10
30. Ուստինով.— Կուլակության վերացումը և խորհուրդները խնդիրները	7
31. Բոստանցյան.— Համատարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. դարնանացանի կամպանիայի խնդիրները	10
32. Կառիլով.— Բոլշևիկյան յերկրորդ դարնան մարտական խնդիր- ները	5
33. Վոսկոյան.— 1931 թ. դարնանացանի կամպանիայի գործ- նական խնդիրները	5
34. Նոր կենցաղի յերգեր	20
35. Առոս Լուսենց.— Բանաստեղծություններ	20
36. Լ. Չառչարին.— Հաղահատիկի Փաբրիկա («Գիգանտ» սովետի մասին)	10
37. Ս. Ա. Անդրեյևի.— Կուլտուրական շինարարության խնդիր- ները	7
38. Պ. Յալցևի.— Գալլերի վոճակը, պրեսա 3 դոր.	25
39. Վ. Ծովյան.— Համկոմկուսի (բ) ԿԿ-ի և ԿՎՀ 1930 թ. դեկտեմբերյան պլենումի արդյունքները	5
40. Դյուդաևսեն Լ. Վոսկոյան.— Դյուդաևսենյան զնա- սատունները Հյուսիսային Կովկասում և նրանց դեմ կովկու- զիսավոր միջոցները	15
41. Ռ. Վիլյամս.— Միլիոնները վոտքի հանքը բյուրոկրատիզմի դեմ պայքարելու	15
42. Ա. Յակովլևի.— Կոլտոշային շինարարության մասին	10
43. Ս. Շալաևի.— Կոլտոշը լեռներում	15
44. Յև. Ոլյուսին.— Կոլտոշային շարժումը և պայքարը կրոնի դեմ	15
45. Ա. Մ. Մալցևի.— Բերքահավաքման մեքենաների ստուգումը և խնամքը	12
46. Մ. Դիգոյան.— Կադակերպները բերքահավաքը	8

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուս. Կովկ. հալի. պրոլետարիատի անդամները գրե-
վածքները
 2. 16-րդ կուսնամարտի արդյունքները
 3. Հյուսիսային Կովկասի հնգամակը.— արդյունաբերություն
 4. Սոցալիստական կազմակերպումը կոլտոշում
 5. Կերի հարցը և սիլոսացումը
 6. Կենդանաբուծության ավագ բանվորների պարտականությունները
 7. Ձեռնարկ ծխախոտագործության համար
 8. Ճագարաբուծություն
 9. Թռչնաբուծություն
 10. Այլատարների կազմակերպումը յիվ յեկամուսները բաժանումը կոլտո-
շում և ավագույն կոլտոշների փորձը Հյուս. Կովկասում
 1. Տրանսպորտը և կալսիչը. տեխնիկական ձեռնարկ
 2. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները
- Դիմկի՝ Ростов н-Д. Буденовский пр., 60, Крайнаиздат.

ՀՀ Ազգային գրադարան



NL0286178

ԳՐԱԴԱՐԱՆ

16742

С. Х. 4.

32196



Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТРИЗДАТА народов СССР.

М. Гигоян

Организуем уборку урожая

НА АРМЯНСКОМ ЯЗ

631.5

q-56